Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 80 - Ա
որոշման

ԾՐԱԳԻՐ
«ՏՆԵՐԻ ՄԱՄՆԱԿԻ ՆՈՐՈԳՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	Շիրակի մարզի Մարալիկ համայնքի Սարակապ բնակավայրի 21 սոցիալապես անապահով ընտանիքի տների տանիքների հիմնանորոգում, նոր պատուհանների և մուտքի դռների տեղադրում, համայնքի բնակարանային պայմանների բարելավում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	«ԱՄՔՈՐ Հայաստան» բարեգործական հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Կարապետ Ուլնեցու 14), ԱՄՆ-ի «Հայ օգնության և աջակցման ընկերակցություն (ARDA)» շահույթ չհետապնդող կազմակերպություն
4.	Ծրագիրը կատարողը	«ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Պարույր Սևակի 9, ՀՎՀՀ՝ 00057312)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Մարալիկ համայնքի Սարակապ բնակավայր, քաղաքաշինության բնագավառ
6.	Ծրագրի բյուջեն	31,000,000 դրամ
7.	Բարեգործությունն ստացողը	Շիրակի մարզի Մարալիկ համայնքի Սարակապ բնակավայրի սոցիալապես անապահով 21 ընտանիք: Ընտանիքների ընտրությունը կատարվել է «ԱՄՔՈՐ Հայաստան» բարեգործական հիմնադրամի ընտանիքների ընտրության հանձնախմբի առաջարկությամբ՝ համայնքի ղեկավարների կողմից ներկայացված առավել կարիքավոր ընտանիքներից:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2023 թվականի փետրվարի 5-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 30-ը

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Անապահով ընտանիքների տների նորոգման համար շինարարական նյութերի, գործիքների ձեռքբերում և շինարարական աշխատանքների իրականացում՝ 31,000,000 դրամ: Նախատեսվում է իրականացնել 2023 թվականի փետրվարի 5-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 30-ը:
10.	Ձեռքբերվող ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1. 90 քմ մետաղապլաստե պատուհանների ձեռքբերում՝ 3,150,000 դրամ, 2. 4600 քմ տանիքի թիթեղի ձեռքբերում՝ 16,560,000 դրամ, 3. 33 խմ փայտանյութի ձեռքբերում՝ 6,214,000, 4. 21 հատ մուտքի դռների ձեռքբերում՝ 1,890,000 դրամ, 5. Շինարարական այլ նյութերի և գործիքների ձեռքբերում՝ 1,886,000 դրամ, 6. Շինարարական աշխատանքների իրականացում՝ 1,300,000 դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը	Ծրագրի իրականացման համար կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում: Ծրագիրն իրականացվելու է հիմնադրամի ընդհանուր ծախսերի հաշվին:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնա-կառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկ համայնքի Սարակապ բնակավայրի վարչական ղեկավարի աշխատակազմ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

02.02.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ